ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«17» Հունվար 2020թ. N ՄՊ/10-2020

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 2-Ի N ՄՈ/160-2019 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Ամասիայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2019 թվականի դեկտեմբերի 23-ի N 52, Ամասիա համայնքի ղեկավարի 2020 թվականի հունվարի 13-ի, Արգավանդ համայնքի ղեկավարի 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 350, «Նոր Արմավիրի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2020 թվականի հունվարի 14-ի N 0-62 և «Ծաղկալանջի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 96 գրությունները.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2019 թվականի մայիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների խորհուրդների անվանական կազմերը հաստատելու մասին N ՄՈ/160-2019 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) որոշմամբ հաստատված N 10 հավելվածի 4-րդ կետում վերահաստատել «Խոյեցյան Արկադի» բառերը, 6-րդ կետում վերահաստատել «Գինոսյան Համլետ» բառերը,
   2) որոշմամբ հաստատված N 15 հավելվածի 4-րդ կետում վերահաստատել «Գևորգյան Արման» բառերը,
   3) որոշմամբ հաստատված N 37 հավելվածի 6-րդ կետում «Թովմասյան Մերի» բառերը փոխարինել «Գրիգորյան Սեդա» բառերով,
   4) որոշմամբ հաստատված N 79 հավելվածի 5-րդ կետում «Նավասարդյան Գոհար» բառերը փոխարինել «Տեր-Խաչատրյան Եսայի» բառերով, 6-րդ կետում «Շափաղաթյան Ժաննա» բառերը փոխարինել «Պողոսյան Ասյա» բառերով, 8-րդ կետում «Բոյաջյան Ռուզաննա» բառերը փոխարինել «Եղիազարյան Ալիսա» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

17.01.2020

X

VERIFIED OCSP 17.01.2020 15:08:31 GMT+4

/Մարզպետ՝

Подписано: GRIGORYAN KAREN 2212890818

Հ.Մաթևոսյան